Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3093

271
4-21

4-p

2010

180

2001

271
4-21

271
Կ-21

ԶԵԿՈՒՑՈՒՄՆ

Բարեյիշատակ Նախորդն Մեր Պօղոս Պետրոս Ժ.Ա. Էմմանուէլեան ի ննին առեալ զԿանոնադրութիւն Զմմառեան Միաբանութեան զյօրինեալն յամի 1890 ի Պատրիարքական Սիւնոդոսի գումարելոյ ի Բաղկեղոն, զնոյն վերսին փոփոխութեամբ ինչ եւ յաւելուածովք մատոյց Ս. Ժողովոյն Տարածման Հաւատոյ ի 20 Սեպտեմբերի 1901 ամի առ ի ընդունել զնաւանութիւն Նորին :

Եւ զի հանոյ թուեցաւ Նմին Ս. Ժողովոյ զի ննութիւն զայնմանէ լինիցի ի Սիւնոդոսի, որ մերձ ընդ մերձ գումարելոց էր, եւ եւս զի որ ինչ խորհրդածութիւնք ի նմին լինիցին՝ առաջարկեսցին ինքեան. ամին իրի ի Ժողովն որ գումարեցաւ յամսեանն Դեկտեմբերի 1901 ամի ննեցաւ այն, եւ նորովք խորհրդածութեամբք, եւ յաւելեալ որ միանգամ ի պարզութիւն մթին ինչ բանից ի դէպ թուէր, Սիւնոդական Թղթով առաջի արկաւ նմին Ս. Ժողովոյ, թախանձագինս խնդրելով վերսին զնորա հաւանութիւն. յորմէ հետէ անցին արդ ամք իբրեւ երկու :

Յետ ընտրութեան Մերոյ յԱ.թոռ Կաթողիկոսութեան իղձ իմն եղեւ բազմաց ի Սիւնոդական Հարց, զի Կանոնադրութիւնքս այսոքիկ այժմէն իսկ սկիզբն կալցին ի գործ մատչիլ առ ի փորձ. այլ առանց ինչ հակառակելոյ կամ արգելս դնելոյ որոշողութեանցն եւ փոփոխութեանց զորս նոյն Ս. Ժողովն, իւրովն իմաստուն մտածութեամբ եւ յառաջատես խոհականութեամբ ի դէպ դատեսցի առնել :

Յայս սակս ի յայտարարութիւն հաւանութեան Մերոյ եւ ի խրախոյս սիրեցեալ որդւոց Զմմառեան Միաբանութեանս, զորոյ զընդհանուր Մեծաւորութիւնն յանձին ունիմ՝ ըստ օրինակի բարեյիշատակ Նախորդաց Մերոց, հաւանութեամբ նոցին Հարց ի դէպ թուեցաւ տպագրել օրինակս ինչ Կանոնադրութեանս առ ի խորհրդածութիւն եւ առ ի գործ դնել առ ժամանակ մի ի փորձ եւ ի հրահանգութիւն, մինչեւ հասցէ հաւանութիւն Նորին Ս. Ժողովոյ:

Զայսոսիկ այսպէս կարգել ի դէպ թուեցաւ Մեզ յօգուտ եւ ի բարգաւանանս սիրեցեալ Որդւոց Զմմառեան Կաթողիկոսական Միաբանութեանս, որոց մէն միոյ տուի զեղմամբ ուրտի զՀայրապետական օրհնութիւն Մեր:

Տուաւ ի Կաթողիկոսարանի Մերում ի Բերա Կ.Պոլսոյ.

Օգոստոսի 1904

յառաջին ամի Հայրապետութեանս

5343Է-ա
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-Арм.ССР
Ս. ԵՄ. Ա. ՄԱՏՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ
40040-67

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ
ԶՄՄԱՌԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Առաջին

ՆՊԱՏԱԿ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԿԱԽՈՒՄՆ

Ա. Վասնզի Միաբանութեանս է վերկութեամբ հոգւոյ ընկերին հոգալ զվերկութիւն իւր, այս է վարել զառաքելական պաշտօն ի վիճակի Պատրիարքութեան Կիլիկիոյ. և առանձինն պարտք են նորա քարոզել և ծաւալել զԿաթողիկեայ Ս. Հաւատս յազգին Հայոց ըստ վարդապետութեան Հռոմէական Ս. Եկեղեցւոյ. և յեղյեղել ի միտս նոցա զկատարեալ հնազանդութիւն առ Ս. Գահն Հռոմայ:

Բ. Ուստի պարտին Միաբանք նախ քան զամենայն մատուցանել զկատարեալ հնազանդութիւն և զյարգութիւն Սրբոյ Գահուն, յարգել և կատարել զհրամանս նորա և յամենայնի հլու և հպատակ կալ նմա:

Գ. Միաբանութիւնս այս սեպհական է Կաթողիկոսական Աթոռոյն և Գերերջանիկ Կաթողիկոսին Կիլիկիոյ՝ իբր Նուիրապետի այնր Պատրիարքութեան և զի են Միաբանութեան երդումն և կանոնք, ամին իրի կոչի Միաբանութիւն Կաթողիկոսական և Միաբանք Կաթողիկոսականք, կամ անուամբ տեղւոյ ծագման իւրոյ՝ եւս և պարզապէս Զմմառեան Միաբանութիւն կամ Միաբանք:

Դ. Միաբանութիւնս այս, որ անդստին յիւրմէ սկզբնաւորութենէ զծառայութիւնս մեծամեծս մատուցեալ է յօգուտ Եկեղեցւոյ և ի ծաւալումն կրօնի, օգտակար և հարկաւոր իսկ է՝ մանաւանդ վասն բազմաթիւ Աւաքելութեանց ի Պատրիարքութեան:

Ե. Անդստին ի ծագմանէ իւրմէ՝ Գերերջ. Կաթողիկոն Կիլիկիոյ կացեալ է անմիջական Մեծաւոր և Գլուխ այսր Միաբանութեան՝ առ որ ուխտէն զհնազանդութիւն ըստ ձեւոյն որ հաւանեալ է ի Ս. Աթոռոյն յամին 1843. և որ յամին 1885. ընկալաւ ի նոյն Աթոռոյ

ինչ ինչ փոփոխութիւնս։ Ուխտեսցին Միաբանք այսուհետեւ ևս ըստ յիշեալ ձեւոյն որ է այս ևս. (Ա. Ա.) առաջի Աստուծոյ և Գերերջանիկ Պատրիարքին մերոյ Տեառն (Ա. Ա.) յամբարձեալ իմում յօժարութեամբ և ազատութեամբ ի Ս. Աստիճանս, դիտեմ առնել և առնեմ զուխտս որք կից են ընդ նոցին Սուրբ Աստիճանաց։ այս է, պահելոյ զողջախոհութիւն և զհնազանդութիւն առ նոյն Գերերջանիկ Պատրիարքն (Ա. Ա.) և առ յաջորդս նորա մինչեւ ցմահ։

Դարձեալ խոստանամ ոչ վանել կամ ծախել յայլսարին իրս և յաւելորդս, զինչսն որք հասանիցեն ինձ ի գործածութենէ քահանայական պաշտաման՝ կամ ի ծառայութենէ զոր մատուցից եկեղեցւոյ. այլ վարիլ նոքօք ի պէտս իմ որպէս վայել է ճշմարիտ եկեղեցականի, բաշխելով ևս անտի աղքատաց ի կարօտութեան նոցա ըստ պատշաճի և ըստ վիճակի իմոյ, և զմնացորդսն դարձուցանել ի Պատրիարքական դպրոցն Զմմառու, առ ի պահպանութիւն այսր հաստատութեան, և ի դարձ փոխարինի վասն աննդեան և վարժից զոր ձրի ընկալայ ի նմա։ և այս ըստ ոգւոյ վաղեմի բարեկարգութեան եկեղեցւոյ։

Ի վախճանի խոստանամ զի յորժամ Գերերջ. Պատրիարքն հրամայեսցէ ինձ երթալ յառաքելութեան կամ ի քարոզել զՍուրբ հաւատս, երթայց փութով ուր և կամիցի, և ցորչափ մնացից ի սահմանեալ ինձ տեղւոջ, հպատակ կացից իրաւաբանութեան թեմական կարգաւորին. և յորժամ Գերերջ. Պատրիարքն հրամայեսցէ ինձ դարձ առնել ի վանս կամ երթալ այլուր, վաղվաղակի կատարեցից զհրամանս նորա։

Այսպէս օգնեսցէ ինձ Աստուած և այս Սուրբ Աւետարանս Աստուծոյ, ամէն։

Զ. Ըստ այսմ նա ինքն Գերերջ. Կաթողիկոսն է անմիջական Դլուխ և Մեծաւոր այսր Միաբանութեան և նմա է հոգ տանիլ ամենայն Միաբանից ուր և գտանիցին։

Է. Նոյն Միաբանք մեծ և փոքր ըստ երդման իւրեանց պարտին հնազանդ և հպատակ գտանիլ Գերերջ. Կաթողիկոսին, իբրեւ Մեծաւորի Միաբանութեան, յարգել և պատուել զինքն ներքին և

արտաքին մեծարանօք, և երբ հրամայէ երթալ յառաքելութիւն, պարտին կատարել անթերի զհրամանս նորա։

Ը. Զօրութեամբ նոյն ուխտի կամ երդման՝ պարտին Միաբանք չվաճառել և ոչ յայլսարհայլն յաւելորդ իրս ի կիր արկանել զինչս ստացեալս ի Քահանայական պաշտամանէ. այլ միայն վարիլ նոքօք ի պէտս իւրեանց, որպէս վայել է ճշմարիտ եկեղեցականի. իսկ զմնացեալն դարձուցանել ի կեդրոն Միաբանութեան ի Զմմառ՝ ի պահպանութիւն այնր հաստատութեան, որով և կարէ պահիլ և յապահովի կալ յաջորդութիւն Միաբանից։

Թ. Վասն ուխտի դարձուցանելոյ յետս զյաւելուած ընչից ստացեալ յեկեղեցական պաշտամանէ, պարտք ի վերայ դնի խղճի իւրաքանչիւր Միաբանի, զի ի կենդանութեան յապահովի կացուսցեն զայն. զի մի մնասցէ զկնի մահու դժուարութիւն ինչ ոչ ի ժառանգաց և ոչ այլ ուստեք ի ծանրաբեռնութիւն խղճի հանգուցելոյն. վասն որոյ կարեն առաքել զայն հետզհետէ ի վանս՝ գնել կամ չինել կալուածս նոցա, զորոյ զմուտսն վայելեսցեն ի կենդանութեան առաքողք գումարողք մինչեւ ցմահ իւրեանց։

Այլ զոր ինչ ի ժառանգութենէ և յայլոց պաշտամանց ընկալեալ իցէ դրամ կարող է ի գործ ածել որպէս և պատչաճ թուեսցի նմա։

Ժ. Փոյթ կալցին Արմի. Եպիսկոպոսունք զի ինչք Միաբանից վախճանելոց ի թեմս իւրեանց հասանիցեն ի վանս ըստ վերոյիշեալ բացատրութեան։

ԺԱ. Աւելորդ դրամքդ՝ որք ի Միաբանից հասցեն ի վանս, յատկասցին յանշարժ կալուածս։

Երկրորդ

ՈՅԵՔ ՀԱՄԱՐԻՆ ՄԻԱԲԱՆԵՔ ԵՒ ԽՆԱՄԱՐԿՈՒԹԻՒՆ ՆՈՅԱ

Ա. Նոքա միայն են և կարեն լինել կամ համարիլ Միաբան, որք աւարտեալ ի վանս զուսումն իւրեանց, յետ քննութեան ժողովոյ Վանաց. և ըստ Տեղեկագրոյ բարիոք վկայութեան Տեղական Մեծաւորին՝ ձեռնադրին հրամանաւ Գերերջ. Կաթողիկոսին։ Կամ որք յետ դնելոյ ի նոյն վանս զուխտն տուեալ ի Ս. Աթոռոյ առա-

քին ի Հռոմ ի վարժարանն Լեւոնեան, կամ յայլ հռչակաւոր ընծայարանս Եւրոպայ։

Բ. Միաբան Եպիսկոպոսունք ի կամէն՝ կարեն մնալ ի Միաբանութեան, և յայնժամ իցէ նոցա և ձայն ներգործական յառաջարկութեան ցուցակի Տեղական Մեծաւորի, և տալ պարտին Վանաց վասն ընկալեալ ձրի վարժիցն և դասատիրակութեան՝ նաեւ մասն ինչ ի յաւելուածոյ ընչիցն ստացելոց ի Բանանայական պաշտամանէ։ Իսկ եթէ անթեմ իցէ Միաբան Եպիսկոպոսն, ունիցի ձայն ներգործական և կրաւորական, և տալ պարտին Վանաց վասն ընկալեալ ձրի կրթութեան, որպէս զայլ ամենայն Միաբան քահանայս, զյաւելուածս ընչից ստացելոց յեկեղեցական պաշտամանէ։

Գ. Եւ եթէ ի թեմական կղերէ ոք խնդրեսցէ Միաբան լինել, ըստ յանձնարարութեան Գերերջանիկ Կաթողիկոսին Ժողովն Վանաց յետ քննելոյ զհանգամանս անձին նորա և զպատճառսն, որոց վասն խնդրէ լինել Միաբան, ձեռամբ Գահիրեցուն յայտնէ Գերերջանիկ Կաթողիկոսին տեղեկագրով զամենայն եւս և զմտածութիւնս իւր ի մասինդ, և նա եթէ յարմար դատեսցի՝ հրաման տայ, և ընկալեալ լինի աղերսարկուն ի կարգս Միաբանից։

Դ. Ցիւրաքանչիւր նուագի յորում ձեռնադրի ոք ի Միաբանութեան կամ ընկալեալ լինի ի նոյն, Գերերջանիկ Կաթողիկոսն ծանուցանէ զայն չրջաբերականաւ համօրէն Միաբանից։

Ե. Միաբանք ձեռնադրին յանուն և ի վերայ Վանաց, որ է նոցա տիրոջս, վասն որոյ ապահովեալ է պարէն նոցա ի լինելն ծեր և անկար, որպէս և յորժամ հիւանդ իցեն՝ խնամատարութիւն, և այդ թէ ի Վանս անդ կամ արտաքոյ, որպէս պատշաճ դատեսցի Գերերջանիկ Կաթողիկոսն, ծանուցեալ զիրն Ժողովոյ Վանաց։

Զ. Չէ օրէն թեմական Եպիսկոպոսաց ձեռնադրել զոք յանուն Միաբանութեան։

Է. Պարէն և զգեստեղէնք Միաբանից՝ որ ի Վանս հոգացեալ լինին ի Վանաց ըստ պատշաճի և սովորութեան, և փոյթ կալցին պահել զմիակերպութիւն։

Ը. Առանձին խնամք տարցին ծեր և տկար Միաբանից որք առանձնանան ի Վանս ըստ պատշաճի և ըստ սովորութեան։

Երրորդ

ԿԵԴՐՈՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

Ա. Կեդրոն Միաբանութեան է Վանքն Փոխման յերկինս Ս. Կ. Աստուածածնի ի Զմմառ Լիբանանու, ուր է և ընծայարանն, և Գերերջանիկ Կաթողիկոսն հոգ տանի բարգաւաճելոյ այնր գամ քան զգամ, և յառաջադէմ զարգանալոյ ընծայարանին յամենայն զիտութիւնս հաւասար բարձրագոյն ընծայարանաց, ի մասնաւորի կանոն նուիրական ուսմանց լիցի համեմատ ընթացից ընծայարանաց Հռովմայ։

Բ. Ի Կառավարութիւն Վանաց Գերերջանիկ Կաթողիկոսն կարգէ զմի ոք ի Միաբանից անտի, որ անուանի Տեղական Մեծաւոր, որոյ ընտրութիւնն լինի ըստ կերպի որ զհետ գայ։ Ամենայն Միաբանք ըստ հրաւիրանաց Գերերջանիկ Կաթողիկոսին առաջարկեն մէն մի երիս անձինս, և Կաթողիկոսն զմին յերից որոց զառաւելագոյն ձայն ստացեալ իցեն՝ կարգէ Տեղական Մեծաւոր գաղտնի քուէարկութեամբ Ժողովոյ Առաջաւորաց Միաբանից, յորում ինքնին կամ ի ձեռն փոխանորդի լաղմի Գահերէց։

Փոխանորդն զոր ի դիմաց իւրոյ կարգէ Ամեն. Կաթողիկոսն ի նախագահել Ժողովոյ Առաջաւորաց լիցի մին ի Միաբան Եպիսկոպոսաց անտի։

Գ. Յեօթն ամս միանգամ լիցի ընդհանուր Ժողով յԱռաջաւորաց Միաբանից ի Վանս Զմմառու հրամանաւ Գերերջանիկ Կաթողիկոսին, և ընդ նորին Գահերիցութեամբ կամ փոխանորդի առ այն կարգելոյ, յընտրութիւն նորոյ Տեղական Մեծաւորի, ի լուծումն դժուարութեանց և այլոց կարեւոր իրաց, որք ընդ առաջ ելանիցեն ի չրջանի եօթնամեայ ժամանակի, և յորոշումն խնդրոյ առաջարկելոյ յօգուտ Վանաց և Միաբանութեան առ հասարակ։

Դ. Պաշտօն տեղական Մեծաւորին է, հսկել բարեկարգութեան Վանաց, և պահպանութեան Միաբանական կանոնաց, հոգ ունել ընչից և ստացուածոց Վանաց, փոյթ տանիլ յառաջադիմութեան և պայծառութեան ընծայարանին, և Գահերէց լինել Վանական Ժողո-

վոյ։ Տեւէ պաշտօն նորա զամս եօթն, և կարէ ընտրիլ վերստին։

Ե. Նոյն Ժողովն Առաջաւորաց ընդ նոր Մեծաւորին ընտրեսցեն զներքին պաշտօնեայսն, այս է զՀոգեւոր Հայրն Վանաց, զՎերատեսուչ ընծայարանին, զՏեսուչ կալուածոց Վանաց և զՄատակարարն ներքին զորս հաստատեսցէ Ամենապատիւ Կաթողիկոսն կոնդակաւ։ Պաշտօնատեարքս այսոքիկ ի պաշտաման իւրեանց կախեալ են զՏեղական Մեծաւորէն։ Եթէ հարկ լիցի զայլս փոխան ի մէջ մատուցանելոյ կամ փոփոխութեան իրիք, Մեծաւորն առաջարկեսցէ Ամենապատիւ Կաթողիկոսին և որոշեսցի և կարգեսցի նոր պաշտօնեայն։

Զ. Գոցի Ժողով մնայուն ի Վանս ընդ Դատերիցութեամբ Տեղական Մեծաւորին, և որոյ անդամք իցեն գլխաւոր պաշտօնատեարք ի Վանս, այսինքն, Հոգեւոր Հայրն, Տեսուչն կալուածոց Վանաց, Վերատեսուչ ընծայարանին և ներքին Մատակարարն։

Է. Մեծաւորն Տեղական խորհրդակցելով ի կարեւորսն ընդ մնայուն Ժողովոյն՝ կառավարէ զՎանս և զընծայարանն, իսկ ի ծանուցս գրէ առ Դերերջանիկ Կաթողիկոսն և ընդունի զհաւանութիւն նորին։

Ը. Տեղական Մեծաւորին պարտք են հոգ տանիլ, զի անխափան կատարեսցին մշանջենաւոր պատարագք Վանաց, և ամի ամի արձանագրեսցէ ի տումարի պատարագաց զվաւերական վկայագիր անթերի վճարման նոցին։

Թ. Ներքին կանոնադրութիւն Վանաց և կանոնք պատկանեալք պաշտօնատարաց և պաշտօնէից, որպէս և ուխտեալ աշխատաւոր Եղբարց, պարտին ունել զհաստատութիւն Դերերջանիկ Կաթողիկոսին, նոյնպէս և կարգաւորութիւն ընթացից զոր պարտին ունել և պահել Միաբանք յԱռաքելութիւնս։

Ժ. Հոգ տարցի զարգացման ուսմանց և լեզուաց, և եթէ յայս սակս տեսցի հարկ ինչ, կարող լիցի Տեղական Մեծաւորն ածել դասատուս, նաեւ յորոց չլիցեն ի Միաբանից, յարանց վկայելոց ի բարեպարիշտ վարս և ի գիտութեան։

Զորրորդ

ՍՏԱՅՈՒԱԾՔ ՎԱՆԱՅ ԵՒ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՆՈՅՆ

Ա. Յատկացեալ են Վանաց և ընծայարանին և մնան յատկացեալ այն ամենայն ստացուածք, որք արդէն քննութեամբ Դերերջանիկ Կաթողիկոսին տեսչականեալ են Միաբանութեան և արձանագրեալ են ի Մատենի ստացուածոց և կալուածոց նորին։ Եւ այսպիսիք են որք գտանին ի Էրզրում, ի Վերիտոն, յԵգիպտոս, ի Բերիա, յԱտանա, յԵւդոկիա և ի Կ. Պոլիս։ Նոյնպէս պատկանեսցի Վանաց և ընծայարանին՝ և որ այսուհետեւ ստացեալ լիցի յանուն նորին։

Բ. Տեղական Մեծաւորն խորհրդակցութեամբ ընդ Ժողովոյ Վանաց կարգէ զգործակալս ի Վերիտոն, յԵւդոկիա, յԵգիպտոս, ի Բերիա, յԱտանա և ի Կ. Պոլիս. և ծանուսցէ զայն Դերերջանիկ Կաթողիկոսին առ ի ընդունելութիւն հաւանութեան նորին։ Եւ պարտք են գործակալացս յօրինել ամի ամի զհաշուագիր ստացուածոց գտելոց ի յիշատակեալ տեղիս, և առաքել դայնս առ Տեղական Մեծաւորն. որ ներկայացուցանէ զայն Վանական Ժողովոյն, և ապա արձանագրել յիւրաքանչիւր մատեանս,

Գ. Նոյն Ժողովն Վանաց քննէ զտարեկան հաշիւս Վանաց զներքին և զարտաքին մատակարարութեանց և զգործակալաց, և յետ հաւանութեան ստորագրեն զայն Տեսուչն կալուածոց և Մատակարարն ներքին, և վաւերացուցանէ զայն Տեղական Մեծաւորն և Բարուղար Ժողովոյն, և նոյն Մեծաւորն առաքէ առ Դերերջանիկ Կաթողիկոսն զվաւերական հաշուեկշիռն միանգամ ի տարւոջ։

Հինգերորդ

ՊԱՐՏՔ ՄԻԱԲԱՆԻՑ ՈՐՔ Ի ՎԱՆՍ

Ա. Միաբան Քահանայք զկնի ձեռնադրութեան իւրեանց մնասցեն ի Վանս զամս երիս անխափան։

Բ. Որք ի Վանս բնակին Միաբանք, պարտին համաձայնիլ կանոնի Վանաց, լինել ընդ կառավարութեամբ Տեղական Մեծաւորին, զհասարակաց և զվանական վարել կեանս, չմուծանել նորութիւնս, չպահանջել սեպհականութիւնս յընչից և ի ստացուածոց Վանաց, և եթէ հարկ ինչ լինիցի, խորհրդով և տրամադրութեամբ Տեղական Մեծաւորին աւարտեսցի իրն։ Եւ ի մասնաւորի զգոյշ կացցեն չխանգարել զբարեկարգութիւն և զկանոնս որովք վարի ընծայարանն։

Գ. Զնոյն պարտս ունին որ և իցէ Միաբանք և յորմէ և իցէ աստիճանէ, որք գնան ի Վանս, որք և պարտին ըստ ամենայնի հնազանդ գտանիլ Տեղական Մեծաւորին և Կանոնաց Վանաց։

Դ. Ամենայն Միաբան Քահանայք որ ի Վանս պատարագեսցեն ըստ դիտաւորութեան Վանաց, որպէս է ի սովորութեան մինչեւ ցայսօր, բաց ի հարիւր պատարագաց զոր մատուսցեն այսուհետեւ ամ ըստ ամէ ըստ դիտաւորութեան իւրեանց։

Ե. Մատուսցին յիւրաքանչիւր ամի պատարագս չորս և զերկուս պաշտօնս ննջեցելոց՝ վասն կենդանի և ննջեցեալ Միաբանից, վասն կենդանի և ննջեցեալ բարերարաց Վանաց։

Զ. Եւ եւս մատուսցեն զմի պատարագ վասն հոգւոյ ննջեցեալ Միքայէլի Յովհաննէսեան Բեբուտեանց, գլխաւոր բարերարի ընծայարանին ի Տօնի Հրեշտակապետաց։ Զնոյն պարտս ունին և որ արտաքոյ Վանաց գտանին Միաբանք։

Է. Միաբանք որք ի Վանս և արտաքոյ, ըստ ազգարարութեան Գերերջանիկ Կաթողիկոսին մատուսցեն վասն ննջեցեալ Միաբանից՝ Եպիսկոպոսաց, Քահանայից և ուխտեալ այլ աշխատաւոր եղբարց երիս պատարագս և զմի պաշտօն հանդստեան։

Վեցերորդ

ՊԱՏՄԱՆՔ ՄԻԱԲԱՆԻՑ ՈՐՔ ԳՏԱՆԻՆ Ի ԹԵՄՍ ԿԱՄ ՅԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆՍ

Ա. Յորժամ Միաբանք զառաջինն առաքին ըստ հրամանի Գերերջանիկ Կաթողիկոսին ի Վանաց յառաքելութիւն, Վանաց է հոգալ զծախս ճանապարհի մինչեւ ի նշանակեալ տեղին, իսկ ի փոփոխիլն թեմէ ի թեմ խնդրողին կամ առաքողին պարտք են վճարել զծախս ճանապարհին։

Բ. Միաբան Քահանայք որչափ ժամանակս գտանիցին հրամանաւ Գերերջանիկ Կաթողիկոսին ի թեմս Եպիսկոպոսաց, պարտին հնազանդ լինել կարգաւոր իշխանութեան Թեմակալին. իսկ յորժամ Գերերջանիկ Կաթողիկոսն յետս կոչեսցէ զնոսա կամ հրամայեսցէ երթալ այլուր, պարտին անյապաղ կատարել զհրամանս նորա, ազդ առնելով Եպիսկոպոսին նախապէս։

Գ. Տեղափոխութիւն Միաբանից թեմէ ի թեմ լինի միայն հրամանաւ Գերերջանիկ Կաթողիկոսին, այնպէս զի մի ոք ի Միաբանից կարող լիցի ելանել ի տեղւոջէն ուր գտանի, և ոչ վիճակաւորք առաքեսցեն զնա արտաքոյ թեմին, առանց նախընթաց գրաւոր հաճութեան Գերերջանիկ Կաթողիկոսին։

Դ. Միաբանք ի թեմս Եպիսկոպոսաց յԱռաջնորդարանս բնակին, և ոչ ի տունս աշխարհականաց։

Ե. Յորժամ յԱռաքելութիւնս գտանիցին Միաբանք, յԱռաքելութենէ անտի ունիցին զպարէն կենաց իւրեանց ըստ պատշաճի և ըստ սովորութեան տեղեաց։

Զ. Ուր և գտանիցին Միաբանք պարտին միանգամ ի տարւոջ գրել թուղթ առ Գերերջանիկ Կաթողիկոսն, և յայտնել զհանգամանս վիճակի իւրեանց, նոյնպէս և առ Տեղական Մեծաւորն։

Եօթներորդ

ՁՈՐՍ ՊԱՐՏԻՆ ՊԱՀԵԼ ՄԻԱԲԱՆՔ ԵՒ ՅՈՐՈՑ ԽՈՐՇԵԼ

Ա. Միաբանք պարտին փայլել համեստութեամբ և ամենայն բարեմասնութեամբ, օրինակ բարի լինել և այլոց ժառանգաւորաց, վարել ընդ նոսա եղբայրսիրութեամբ, և առանձինն իմն օրինակաւ պարտաւոր զանձինս ճանաչել այնմ ամենայնի, զոր կանոնք եկեղեցականք աւանդեն վասն համեստութեան ժառանգաւորաց. վասն որոյ որք ոչ մատուցանեն հնազանդութիւն Գերերջ. Կաթողիկոսին, կամ որք ա-

նալդեն զնա և բամբասեն, կամ որք յայլ գործս յանցապարտ գտանին, ըստ օրինին պատժին ի Դերերջ. Կաթողիկոսէն։

Բ. Եթէ (զոր Տէր մի արասցէ) զտցի ոք ի Միաբանից զեղծ վարուք կամ անհամբոյր բարուք, կամ որ վարդապետութիւնս թիւրս քարոզեսցէ, Դերերջ. Կաթողիկոսն վարի ընդ այնպիսւոյն ըստ եկեղեցական կանոնաց և արտաքսէ իսկ ի Միաբանութենէ։

Ութերորդ

ԱՌԱՔՈՒՄՆ ԿԱՄ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ

Ա. Առաքումն աշակերտաց լինի նախընթաց գիտութեամբ Տեղական Մեծաւորին և հրամանաւ Դերերջ. Կաթողիկոսին. և ժողովին յամենայն սահմանաց Պատրիարքութեան Կիլիկիոյ, յերիս ամս միանգամ։

Բ. Առաքին ի Վանս այն պատանիք միայն, որք իցեն բարի, ընտիր, հեզ, բարեհամբոյր և յարմար կրթութեան և ուսման, և յառաջ քան զառաքումն իւրեանց պատրաստեսցին զամս երկուս յիւրաքանչիւր տեղիս և առաքողք վկայութիւն դիցեն՝ թէ ճշդիւ կատարեալ իցէ այս պայման, և ամք կենացն լիցին երկոտասան։

Գ. Պահեսցի տպագրեալ ցուցակ հարցմանց զհանգամանաց առաքելի պատանեաց, յառաջ քան զառաքումն նոցա որում պատասխանել պարտի Վիճակաւորն, որ առաքէ զպատանին. և վաւերացուցեալ զայն ստորագրութեամբ իւրով, հասուցանել առ Դերերջ. Կաթողիկոսն, որոյ հաղորդեալ զայն Տեղական Մեծաւորին, եթէ արժան դատեսցի, հրաման տայ առաքել զպատանին։

Դ. Մուտ աշակերտաց լինի յառաջին օրէ անտի Օգոստոս ամսոյ մինչեւ ի սկիզբն Հոկտեմբերի, որ է միանգամայն և սկիզբն ուսումնական տարւոյ։

Ե. Թիւ աշակերտաց ի Վանս լիցի ըստ համեմատութեան տարեկան եկամտիցն և որոշեսցէ զայն Տեղական Մեծաւորն ընդ Վանական ժողովոյն, և ծանուսցէ Դերերջ. Կաթողիկոսին։

Զ. Յառաջ քան զընդունելութիւն հրամանին, մի ոք ի Վիճակաւորաց առաքեսցէ պատանիս ի Վանս։

ՊԵՏ ԿՈՄ ԳՐ-ՊԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Месропяна

Է. Եթէ ոք առանց յառաջընթաց հրամանի Դերերջ. Կաթողիկոսին առաքեսցէ պատանիս ի Վանս, առաքեալն դարձուսցի յետս և զամենայն ծախս կրեսցէ առաքողն։

Ը. Որ միանգամ որով և իցէ պատճառաւ արտաքսեալ կամ ելեալ իցէ յայլոց դպրոցաց կամ յընծայարանաց, մի ընդ ընկալցի ի Վանս։

Թ. Թէ պէտք արտաքսելոյ աշակերտաց լինիցի, Տեղական Մեծաւորն ի գործ դիցէ զայն խորհրդակցութեամբ ընդ Վանական ժողովոյն, ի բաց առեալ զդէպն զայնոսիկ՝ որք ոչ տանին յապաղումն։

Իններորդ

ԿԱՐԵՒՈՐ ԳԻՏԵԼԻՔ

Ա. Եթէ յընթացս իւրաքանչիւր եօթնամեայ շրջանի դժուարութիւն ինչ ընդ առաջ ելանիցէ զմտաց յոգուածոցս, վարեսցին ըստ բացատրութեան Դերերջ. Կաթողիկոսին։

Բ. Իսկ եթէ յեօթնամեայ Ընդհանուր ժողովի (տես Գ. Դ.) որոշեսցի ինչ, որ երեւելի փոփոխութիւն յոգուածոյ իրիք՝ որ ի կանոնադրութեանս, ի մէջ բերցէ, և կամ հարկ իրացն պահանջեսցէ նոր ինն յաւելուլ յոգուած, Դերերջանիկ Կաթողիկոսն առաջի արկանէ զայն Սրբոյ Աթոռոյն առ ի ընդունել զհաւանութիւն նորին, և մինչեւ հասցէ հաւանութիւնն անփոփոխ մնասցէ։

Տասներորդ

Ա. Կանոնադրութիւնքս առաջարկեսցին Ս. ժողովոյն և խնդրեսցի հաստատութիւն ի Սրբոյ Աթոռոյն։

Բ. Մի մի տպագրեալ պատճէն կանոնադրութեանս, զկնի հաստատութեանն ի Սրբոյ Աթոռոյն, տացի մէն միոյ ի Միաբանից։

Հաճեալ և հաւանեալ ընդ այսոսիկ վերոյսուն յոգուածս կանոնաց, բաժանեալս ի տասն պրակս բանից, որք բովանդակին ի մեծասան թղթատարս ի վեր այսր գրեալս, Մեք ինքնին առաջար-

3093

կեցաք Սրբոյ Ժողովոյն Տարածման Հաւատոյ, առանձինն թղթով տուեալով ի 20 Սեպտեմբերի այսր ամի, առ ի ընդունել զհաստատութիւն ի Սրբոյ Աթոռոյն։

Եւ ի հաւատս այսր ամենայի եդաք ի սմա զվաւերական և զձեռագիր Մեր։

Ի Կաթողիկոսարանի Մերում ի Բերա Կ. Պոլսոյ
ի 20 Սեպտեմբերի 1901

ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԱ·

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ ԿԻԼԻԿԻՈՑ

(ՏԵՂԻ ԿՆՔՈՑ)

ԳԷՈՐԳ Ծ. Վ. ԹԷՐԶԻՊԱՇԵԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԴԻՒԱՆԱՊԵՏ

ՀՀ Ազգային գրադարան
NL0030073

3004